ԿԱՐԾԻՔ

ՄԱՐԻԱՄ ՇԱԽՄՈՒՐԱԴՅԱՆԻ

«ԱՆԱՊԱՏԻ ՕԴԱՊԱՐՈՒԿՆԵՐԻ»
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ՁԵՎԵՐԸ, ԹՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹԸ»

թեկնածուական ատենախոսության վերաբերյալ

Աշխատանքի արդիականությունը

Անապատի օդապարուկները նոր տիպի հնագիտական հուշարձաններ են Հայաստանում, որոնք գրեթե ուսումնասիրված չեն եղել նախկինում: Այս տեսանկյունից ատենախոսությունը խիստ արդիական է, քանի որ առաջին անգամ գիտական հանրությանը ներկայացվում է խնդրի վերաբերյալ ամփոփ մի աշխատանք:

Հետազոտության կառուցվածքը, շարադրումը, ձևավորումը և արդյունքները

Հետազոտությունը բաղկացած է ներածությունից, հինգ գլուխներից (համապատասխան ենթագլուխներով), եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից (181 միավոր), երկու հավելվածներից, որոնք ներառում են քարտեզներ (6 միավոր), աղյուսակներ (5 միավոր), դիագրամներ (12 միավոր), գծա/նկարներ (78 միավոր) և պատկերաշար (200 միավոր): 427 էջից բաղկացած աշխատանքը (որից 130 էջը տեքստային հատվածն է) ունի տրամաբանական կառուցվածք, որում նախ ընդհանուր առմամբ ներկայացվում են օդապարուկների աշխարհագրությունը (Գլուխ I), կառուցվածքը և ձևերը (Գլուխ II), հնագիտական համատեքստը (Գլուխ III), թվագրության և ժամանակագրության (Գլուխ IV), ինչպես նաև գործառույթի խնդիրները (Գլուխ V): Աշխատանքը շարադրված է պարզ լեզվով, հեղինակի արտահայտած մտքերը հասկանալի են, բացակայում են ավելորդ բառերն ու մտքերը, եզրակացությունները համապատասխանում են բովանդակությանը: Առկա քարտեզները, աղյուսակները, դիագրամները և

պատկերները արտացոլում են հեղինակի վերլուծությունները և դրանց հիման վրա արված եզրակացությունները: Ձևավորումը իրականացված է արհեստավարժ ոճով: Կատարված ուսումնասիրության արդյունքում ի մի են բերված առկա հիմնական տվյալները, որոնց միջոցով ընդհանուր՝ որակական և քանակական պատկեր է ստացվում անապատի օդապարուկներ երևույթի վերաբերյալ: Ատենախոսության նախնական տարբերակի վերաբերյալ արված դիտողությունները գլխավորապես հաշվի են առնվել հեղինակի կողմից:

Աշխատանքի հիմնական արժեքը

1. Ոչ միայն հայ հնագիտության մեջ, այլ ընդհանրապես, առաջին անգամ ի մի են բերված օդապարուկների վերաբերյալ գրեթե բոլոր առկա տվյալները: Ճիշտ է, նախկինում եղել են մասնակի անդրադարձներ խնդրին, բայց համապատասխան հարցադրումներով, նման ծավալով և ֆորմատով օդապարուկները երբեք չեն քննարկվել:

2. Աշխատանքում օգտագործվել են տվյալներ Globalkites նախագծի մոտ 5700 օդապարուկների վերաբերյալ: Դրանց մեթոդապես ճիշտ ուսումնասիրությունը թույլ է տվել որոշել այս կամ այն հատկանիշի տարածվածությունը, համատեղ հանդիպման հաճախականությունը, վեր հանել մի շարք օրինաչափություններ:

3. Ստեղծվել է տվյալների մանրամասն շտեմարան՝ համապատասխան նկարագրություններով: Քանակական վերլուծությունները արտահայտված են բազմաթիվ ցանկերով և դիագրամներով: Նման քանակի տվյալներ շրջանառող աշխատանք երբեք չի իրականացվել, և այս իմաստով ատենախոսությունը գիտական նորույթ է:

4. Աշխատանքում շրջանառվում են չհրատարակված բազմաթիվ նյութեր, որոնք նաև հեղինակի հետազոտությունների (պեղումներ և դաշտային հետախուզական աշխատանքներ) արդյունք են:

5. Ատենախոսը քաջածանոթ է առկա գրականությանը և դրանք հղում է՝ ելնելով համապատասխան էթիկայի կանոններից:

6. Հեղինակի կողմից ի մի բերված տվյալները քննարկվող աշխատանքը դարձնում են յուրահատուկ հանրագիտարան, որում հնարավոր է փնտրել և գտնել օդապարուկներին վերաբերող ամենատարբեր նկարագրություններ և տեսակետներ:

7. Առանձին խնդիրների քննարկման ընթացքում հեղինակն առաջարկում է նոր և ուշագրավ տեսակետներ, որոնք քննարկվում են զգուշությամբ: Դրանք վերաբերում են հատկապես օդապարուկների տիպաբանությանը, թվագրությանը և գործառույթին:

Դիտողություններ և առաջարկներ

1. Աշխատանքը հետագայում հրատարակելիս՝ կարելի է մտածել օդապարուկներին այլ մակդիր տալու մասին, քանի որ «անապատ»-ը չի արտահայտում կոնկրետ հայկական միջավայրը:

2. Աշխատանքը հետագայում հրապարակելիս՝ լավ կլինի օգտագործել նաև խորհրդային գերմանրամասն օդալուսանկարներ:

3. Ցանկալի կլիներ ունենալ օդապարուկների հատկանիշների տարածման առանձին քարտեզներ՝ ըստ տարբեր ենթագոտիների/մարզերի բացելով աղյուսակ 3-ի բովանդակությունը:

4. Թեմային անուղղակիորեն վերաբերող տարբեր հարցերի (մշակութային պատկանելություն, թվագրություն, ժայռապատկերներ, Արագածի հարավ-արևմտյան լանջերի առանցքային շրջանի նշանակություն ողջ Հայկական լեռնաշխարհի համատեքստում) լուսաբանման համար օգտակար կլիներ հղել նաև հայ հեղինակների հայերեն աշխատանքներ: Օրինակ՝ օդապարուկների գործառույթի խնդիրը քննարկելիս խոսվում է լևանտյան ժայռապատկերների կարևորության մասին (էջ 65), սակայն չեն հղվում հայաստանյան նյութերը համանման շինությունների պատկերներով:

5. Հեղինակը նշում է, որ օդապարուկները հիմնականում հանդիպում են ծ.մ. 1000-1500 մ վրա, հասնում են մինչ 1800 մ: Թեև ըստ հեղինակի դրանք տիեզերքից արված պատկերներում բացակայում են բարձրլեռնային գոտիներում, սակայն

օդապարուկների հետ կապված աշտարակների և ագլոմերատիվ կլոր կառույցների առկայությունը բարձր զոտիներում չի բացառում դրանց հետագա հայտնագործումը նաև 1800 մ բարձր ոլորտում:

6. Քանի որ օդապարուկների հետազոտությունը նոր է սկսում, բնական է, որ դրանց տարածույթի, թվագրության և գործառույթի հետ կապված բազմաթիվ խնդիրներ կան: Հեղինակը նշում է, որ օդապարուկները խիստ որոշակի գոտում են հանդես գալիս և, որպես ընդհանուր երևույթ, փոխկապակցված են, սակայն դրանց բաշխվածությունը (Սաուդյան Արաբիա, Լևանտ, հյուսիսային Միջագետք-Սիրիա, Հայաստան, Միջին Ասիա) առաջին հայացքից շատ ընդարձակ է, հատկապես եթե հաշվի առնենք բացարձակապես տարբեր լանդշաֆտային և մշակութային գոտիները:

Թվագրության իմաստով տրամաբանական է հեղինակի կարծիքը, որ առկա տվյալները ՀՀ տարածքից մեզ հասցնում են միջին բրոնզի դար, բայց դրանց ակունքները կարող են գնալ դեպի վաղ երկրագործական հասարակություններ (ինչպես լևանտյան գոտում է), իսկ հետսագույն օգտագործումը՝ մինչ միջնադար (ինչպես միջինասիական գոտում է):

Ինչ վերաբերում է օդապարուկների գործառույթին, հեղինակը մանրամասն քննարկում է բոլոր վարկածները (որոգայթ, անասնապահության հետ կապված համատեքստ նն), սակայն առավելապես հակված է ծիսապաշտամունքային տեսակետին, որի համար բերում է ժայռապատկերների համապատասխան պատկերագրության և դրա հինարևելյան զուգահեռների հանգամանքը: Հաշվի առնելով վաղ հասարակություններին բնորոշ սինկրետիկ աշխարհայացքի պարագան, որում սահման չկա սակրալ և պրոֆան տարածքների միջև, կարծում ենք կատեգորիկ ֆունկցիոնալ մոտեցումները ընդունելի չեն. նույն միջավայրը կարող էր տարբեր նպատակներով օգտագործվել:

7. Աշխատանքում առկա են որոշ վրիպակներ կամ տերմինաբանական խնդիրներ (օրինակ՝ էջ 166, Աղյուսակ 5, տող 1՝ «2059-191 կալ», թվանշան է պակասում; էջ 51՝ «9x9 մ տարածք», պետք է լիներ՝ «9x9 մ մակերես»; էջ 57, հղում 36՝ բաց է թողնված «կողմից» բառը; էջ 80՝ «թռեղք-վանաձորյան շրջափուլ», պետք է

լիներ՝ «թռեղք-վանաձորյան մշակույթ», «անտիկ և զարգացած միջնադարյան ժամանակաշրջան», պետք է լիներ՝ «անտիկ դարաշրջան և զարգացած միջնադար»; քարտեզներից 2, 3, 6-ը կարելի էր ավելի մեծ չափերով ներկայացնել՝ ընթեռնելիությունն ապահովելու համար):

Եզրակացություն

Վերոհիշյալ դիտողություն-առաջարկները հիմնականում տեխնիկական բնույթի են և հեշտությամբ կարող են լրացվել հետագայում. դրանք ուղղված են աշխատանքը լրացնելուն/բարելավելուն և ոչ փոփոխելուն: Իրականում քննարկվող ատենախոսությունը կարևոր ներդրում է Հին Հայաստանի նյութական մշակույթի հետազոտության բնագավառում, իսկ հեղինակը լիովին արժանի է իր հայցած գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս, պ.գ.թ., դոցենտ Ա. Բոբոխյան

պ.գ.թ. Ա. Բոբոխյանի ստորագրությունը հաստատում եմ
ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի փոխտնօրեն՝ Տ. Դալալյան

28.06.2023թ.